

Ռ. Հ. Գրիգորյան

ՀՈՄԵՐՈՍԻ «ՈՂԻՍԱԿԱՆ» ՎԻՊԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծ է եղել Հոմերոսի ստեղծագործության նկատմամբ սերն ու հետաքրքրությունը համաշխարհային գրականության մեջ: «Ողիսականը» թարգմանվել է բազմաթիվ լեզուներով: Հայերեն լեզվով ճանաչված է երեք թարգմանություն.— Թոմաճանի թարգմանությունը կատարված՝ 1848 թ. Դրքաշարյանինը՝ 1958 թ. և Համբարձումյանինը՝ 1958 թ.:

Թոմաճանի գրական ստեղծագործությունների շարքում իր առանձնահատուկ տեղն է գրավում «Ողիսականի» հայերեն թարգմանությունը: Այն ունի մի քանի առանձնահատկություններ. լեզուն ինքնատիպ է և նման չէ նրա այլ ստեղծագործությունների լեզվին, առանձնահատուկ վերամբարձություն է պատկերավորելով է բնորոշվում նրա ոճը, միևնույն ժամանակ նկատվում է ընդգծված ձգտում՝ պահպանելու Հոմերոսի ստեղծագործությանը հատուկ պարզունակությունն ու հանդիսավոր մեղմությունը: Թարգմանիչն ինքը բարձր է գնահատում Հոմերոսի վիպերգությունները, միևնույն ժամանակ նկատելով, որ «Իլիականի» և «Ողիսականի» մեջ կա ասարեքություն... ըստ որում այս «Ողիսականն» Հոմերի լի է խիտ և հոծ բարոյական հրահանգօք ընդ ալլաբանական վիպօքն և ընդ բազմօղեմ օրինակօքն»¹:

«Ողիսականը» օժտված է էպիկական առանձնահատկություններով, սակայն, եթե այստեղ քիչ են համեմատություններն, ապա դրա կողքին հատուկ հետաքրքրության են արժանի կրկնությունները. վերջիններս այստեղ հանդես են գալիս ամբողջական նախադասությունների ձևով, ճաշակով են, բարձրարվեստ, և նրանց վերարտադրությունն էլ պետք է համապատասխան լինի բնագրին. այսպես, «Ողիսականում» կրկնվում է 'Η'μος' δ'ἦρ: γένεα φανη' 'ροοδᾶχτελος 'Ηωζ'. նախադասությունը, կրկնվում են նաև Պենելոպեի խորամանկությունը պատկերող հատվածները (գլ. 2, 19, 24, էջ 85, 137, 128):

Թոմաճանը այն վերարտադրում է այսպես՝

Այգ վարդամատն առաւօտուն գայր ի յաշխարհն յերևան... (գլ. 2):

Նույն այդ նախադասությունը Տ-րդ գլխում թարգմանվում է մի այլ կերպ՝

Այգ վարդամատն ծագեցաւ, յարեաւ արքայն ի մահճաց... (գլ. 3):

Իմաստային տեսակետից կարծեք թե ոչինչ չի փոխված, սակայն հարցը միայն սրանում չէ, նման մեծածավալ էպիկական գործ թարգմանելիս պետք է պահպանել ժանրային բոլոր առանձնահատկությունները. տվյալ դեպքում կրկնությունները բնագրին համարժեք վերհանելը տալիս է թարգմանվող վիպերգության լիակատար պատկերը, մանավանդ որ նրանք քմահաճ կրկնություններ չեն: Գոնկրետ դեպքում, Թոմաճանը կատարում է որոշ հասկացու-

¹ Հոմերոս, Ողիսական, Վենետիկ, 1848 թ., թարգմ. Ե. Թոմաճան, էջ 1:

թյունների ավելորդ հավելումներ, այսպես՝ «ի յաշխարհն լերեան» «յարեաւ արբալն ի մահնաց» դարձվածքները ավելացված են. բնագրում մենք չենք հանդիպում նման հասկացողությունների, իսկ դրա կողքին թարգմանչի տեսադաշտից դուրս է մնացել ԴՐԱՅԱՆԱ «վազածին», «վաղորդյան» ածականը:

Թոմաճանի թարգմանության արժանիքներից է հերոսների ներքնաշխարհի հոգեվիճակների անադարտ վերարտադրությունը. այս առումով հետաքրքրական է Պեննելոպեի կերպարը՝

Իայր ելանէր Պեննելոպէ գիւրն թողեալ սրսկապան
 զԱրտեմիսեայն բերեալ ըղտիպ և զոսկեղէնն Աստղղկան:
 Նըմա ըգգահն իւր սեպհական զետեղեցին առ հըրոյն
 էր ի փղոսկր, էր և յարծաթ այն գահը նորա զարդարում²:

Իսկ երբ Հոմերոսը նկարագրում է Ոդիսևսի տվայտանքները Ալքինոյ թագավորի խնջուլքի պահին, ուր «փառապսակ երգիչը» պատմում է Տրոյական պատերազմի հերոսների մասին՝ այդ հատվածում Թոմաճանին հաջողվում է հիմնականում պահպանել բնագրի ոգին և իմաստը:

Հոմերոս՝

...αὐτὰρ Ὀδυσσεὺς
 Τηχέτω, οὐχ οὐδ' εὐσεύεν, ὑπο θιέφαροι· παρ εἰκας
 ὡς οὐ γυνὴ χλαίτης· φίλον ποσσὲν ἀμφίπτεσ σῶσα,
 ὡς Τε εἴης προσθεν πολλοὺς λαώντες πεσόντων
 ἀστῆϊ καὶ τεχέσσουσιν αἰσυνῶν νηλεές τιμαρ.

Տառապում է Ոդիսևսը և արցունքը թրջում է նրա թարթիչներն ու այտերը, ինչպես կինը բնկած իր սիրելի ամուսնու վրա, հեծեծում է (ջալում) է ամուսնուն, որ կործանվեց պաշտպանելիս իր քաղաքն ու ժողովուրդը. երբ վանում էր մահ-օրհասը իր քաղաքից և սիրելի զավակներից:

Այսպես է այս տողերի բառացի թարգմանությունը:

Թոմաճանը հաղթահարում է այս հատվածը ես, թույլ տալով սակայն որոշ շտկումներ ի վնաս թարգմանությանը՝

Տապէր Ոդիւս ի ցօղոյ արտեանանց այտք թանան.
 զոր սրինակ բազմակական սիրուն զարամբ կինըն լալ
 Զի փրկանալն իւրոյ որդւոց և քաղաքին տապաստ կալ...³

Հիմնականում ճիշտ է տրված իմաստը, որոշ դեպքերում գտնված է բնագրի հոմանիշը՝ տապէր, հալվեր, թեև կան անճշտություններ, այսպես՝ «αὐτὰρ» բառը, որ նշանակում է «արցունք», Թոմաճանը թարգմանում է «ցող», որի ավելորդությունն ակնբախ է դառնում, երբ այն դիտում ենք կոնտեքստի տրամաբանական կապակցության մեջ, ուր արտահայտված է հերոսի հոգեվիճակի պատկերը. բնագրում ասված է. «նա լալիս էր այնպես, ինչպես կինը կողբար իր ամուսնու դիակի վրա». պարզ է, որ այդ աչքերից ոչ թե ցող, այլ՝ արցունք կհոսեր հեղեղի նման:

Եկատվում է նաև Հոմերոսյան տողերը նույնահանգ վերջացնելու ավելորդ ձգտում: Թոմաճանը սխալ է թույլ տվել նաև իններորդ գլխի հետևյալ հատվածում՝

² Հոմերոս, Ոդիսական, Վենետիկ, 1848, թարգմ. Թոմաճանի, 19 զլ., էջ 225:

³ Հոմերոս, Ոդիսական, զլ. 4:

⁴ Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Թոմաճանի, զլ. 8-րդ:

Հոմերոս՝

Ζεὺς δ' ἐπιτιμητῶρ ἵκεταω τε ξανόν τε,
Σεινός, ὅς ξεινοῖσιν αὖ δοῖοισιν ὅπ' ἦδεῖ

Ջեսն է հովանավորողը ողորմություն հայցողներին և հյուրերի նրանց հյուրընկալի և ուղեկիցը. նա է պանդուխտներին (օտարականներին) ուղեկցում և արժանի դարձնում մեծարանքի:

Թոմաճան՝

Հիւր որերոյն ողորմաւոր Արամազդն է հովանի.

Այն վանատուրն սիրէ ըզհիւրս և շուք եղեալ պահ ունի

Ըստ բնագրի, ավելի ճիշտ կլիներ թարգմանելիս ժանրության կենտրոնում դնել հետևյալ միտքը՝

Ջեսը հովանավորում է հյուրերին.....

կամ՝

Եկվոր հյուրը, ճանապարհորդները արժանի են մեծարանքի.

Մանավանդ, որ կա հնամենի ավանդություն՝ հյուրին դիմավորելիս ընդունված է ասել «հյուրը» կամ «ղոնախն» աստծուն է խոսքերով, այսպես էլ հյուրընկալողը հաճոյախոսում է իր հյուրին. այս դեպքում հավանաբար այդ միտքն է արտահայտված:

Բանագիրության մեջ⁵ աստված բառը նույնացվել է Ζεῦς բառի հետ (см. Март, Сочинения), այդպես է կոչվել փոյուզիական, թրակիական աստվածը, հետագայում այն նույնացվել է Դիոնիսոսի հետ:

Նման զուգահեռ կարելի է անցկացնել նաև աստված բառի և հունական ἀσπασμαῖ բարեհամբույր դիմավորել, հովանավորել՝ բառերի միջև. այսպիսի է պիտետով է Ջեսը հիշվում Հոմերոսի վեպերգություններում: Հայ իրականության մեջ առկա «ղոնախն» աստծուն է՝ դարձվածքը մեզ ենթադրել է տալիս, որ մեր ժողովուրդը ևս աստծուն վերադրել է հովանավորության նման հատկանիշ, մանավանդ, որ Վանատրի աստվածները կատարել են հյուրընկալողի, պանդուխտներին հովանավորողի գեր. այդպես է աստված հիշվում նաև Սուրբ գրքում՝ «Նման յունաց հիւրասէր Որմզդական դիցն Վանատրի»: Ջեսը ևս հյուրընկալող և հովանավորող հատկություններ է օժտված եղել:

Թոմաճանի թարգմանության այս մասնակի թերությունները որակ չեն, հիմնականում թարգմանությունը հաջողված է, և հաղթահարված են ժանրային ու ոճական նրբությունները: Այս առումով հետաքրքրական է 10-րդ երգի 3—4 տողերի թարգմանությունը՝

Հոմերոս՝

πλωτῇ ἐνὶ νηῶσ παρὰν ὅς τε μιν περὶ τεύχες
Χαλκ εὐν ἄρρ' ἦκτον, λίσσῃ δ' ἀναδέσσομε πετρε

Բառացի կլինի այսպես.

(ամբողջ) կղզին շրջապատում էր պղնձակերտ, անխորտակելի պարիսպը, իսկ վերեկից վար (կախված) մի անքակտելի լերկ ժայռ...

Թոմաճանը գրում է՝

Կուռ պըղընձոյ պատուար, և ժայռն

Ողորկ պատէր զայն ողջոյն....

⁵ Кремер, Словарь гомеровских слов, в связи с «Иллиадой», 1888 г.

Այլիշան, Հին հայաստե Հայոց, 318:

Որոնք են այն հիմնական հատկանիշները, որ ժառանգեցին Թոմաճանից Հոմերոսի պոեմի հաջորդ հայ թարգմանիչները.

1. Թոմաճանի մոտ խորը ըմբռնված է և թարգմանություն մեջ սերտորեն պահպանված Հոմերոսի արվեստը բնութագրող այնպիսի արժանիքների զեղարվեստական ու ծագումնաբանական առանձնահատկությունները, ինչպիսիք են էպիտետներն ու համեմատությունները: Թարգմանության մեջ համարյա միշտ գտնված են նրանց իմաստային և ծագումնաբանական չուրօրինակությունը արտահայտող հայերեն բառերը (լուսածղի, աստվածական, կորդակաճոճ): Թարգմանիչը հիմնականում հասել է հոմերոսյան էպիտետների միաբառ թարգմանությանը:

2. Թոմաճանը օգտագործելով գրաբարյան հարուստ բառ ու բանը, հաջողությամբ է վեր հանել Հոմերոսի վերամբարձ ոճը և էպիկայի պաթետիկ շունչը (քաշտի, դիցանոյշ, միգանոյշ): Այս հանգամանքը անհրաժեշտ գործոն է Հոմերոսի վիպերգությունների թարգմանության համար և կիրառվել է նրա հաջորդ, հայ թարգմանիչների կողմից:

3. Եվ վերջապես Թոմաճանի «Ողիսականի» թարգմանության 3-րդ և ամենահիմնական արժանիքը նրանում է, որ այն Հոմերոսի վիպերգության թարգմանելու տրադիցիան ստեղծեց հայ իրականության մեջ:

Ինչպես վերը նշվեց, 1958 թ. լույս տեսավ Հոմերոսի «Ողիսական» պոեմի Գրքաշարյանի թարգմանությունը: Ինչպես է այն հաղթահարել այդ դժվարին գործը: Դրան պատասխան տալու համար պետք է դիմել բնագրի և թարգմանության համեմատությանը:

Սկսենք հենց առաջին գլխից. Հոմերոսը իր վիպերգությունների մեջ բազմիցս դիմում է մուսային, դիցուհուն, որպես ոգևորիչ ուժի: Ճիշտ ասելով՝ սկսվում է *μῦθον αἰεὶ δὲ θεῶν* նախադասությամբ, իսկ «Ողիսականը»՝ *Ἀνδρᾶ μοῖ ἐννεπε, μοῦσα...*

Հոմերոսական գիտնականների կարծիքով «Ճիշտ ասելով» գրված է ավելի վաղ շրջանում, քան «Ողիսականը»: Ճիշտ ասելով՝ երգվում էր, այդ իսկ պատճառով բանաստեղծի «պահանջն» աստվածուհուց հերոսի զգայրույթ երգելն է», մինչդեռ «Ողիսականը» պատմվում էր երգիչ-անհատների կողմից, այդ է հաստատում բնագրի *ἔννεπε* բառը, որ նշանակում է պատմել, ասել՝ ուրեմն պետք է լինի «պատմիր մուսա» և ոչ «երգիր մուսա», ինչպես թարգմանում է Գրքաշարյանը: Այնուհետև, ճիշտ չէ պոեմի երկրորդ տողի թարգմանությունը:

Հոմերոս՝

πλάγχθη, ἔπει Τροίης ἱερὸν πτολίεθρον ἐπεΐρην⁷.

Գրքաշարյան՝

Ով թափառեց երկրն երկիր մինչ նվաճեց Իլիոնը մեծ⁸:

Բնագիրը պարզորոշ ասում է. պատմիր այն մարդու մասին, որը Իլիոն քաղաքը կործանելուց հետո թափառեց երկար: Գրքաշարյանի թարգմանության պատկերը մի փոքր այլ է. ըստ նրա Ողիսեսը թափառում է այնքան ժամանակ «մինչև» որ նվաճում է Իլիոն քաղաքը:

Եթե անգամ հաշվի չառնվի հունական դիցաբանական երգերի առկայությունը փաստը, որոնք բոլորն էլ հակառակն են ապացուցում, ապա բավական

⁷ *Ὁ μῦθος. Οἱ εννεπε, 1, 2;*

⁸ Հոմերոս, Ողիսական, Թարգմ. Գրքաշարյանի, գլ. 1-ին, 2-րդ տող:

է առդրադառնալ Հոմերոսի մյուս թարգմանիչներին համոզվելու համար դրանում՝ կոնկրետ դեպքում մենք նկատի ունենք Համբարձումյանի և Թոմաճանի թարգմանությունները:

Թոմաճան՝

... Որ Յեղիոնն ըզսուրբ քանդեալ թափառեցաւ ընդ երկար⁹.

Համբարձումյան՝

..... Իլիոն քաղաքը կործանեց և թափառեց ապա երկար¹⁰... և վերջապես ինչ էն ասում մեզ կոնստեքստի πλᾶγχθῃ թափառել, 'επει երբ, հետո, ἱερὸν սուրբ, πολιεῖδρον քաղաք, επερεσεν կործանեց բառերը: Իրքաշարյանը չի թարգմանում «մեծ» ածականը, «նվաճեց» բայը և «մինչ» կապը, իսկ «կործանեց» բայի անտեսումով աղավաղվում է ամբողջ նախադասության իմաստը: Ավանդություն կա, որ Իլիոնը ոչ միայն նվաճվում, այլև հիմնահատակ կործանվում է այդ պատերազմի ժամանակ, այդ էն վկայում նեսթորի և Մենելաոսի պատմությունները¹¹:

Գրքաշարյանը իր թարգմանությամբ բավարար վերարտադրելով պոեմի հիմնական բովանդակությունը, երբեմն թույլ է տալիս անհարազատ, ոչ համարժեք վերարտադրություններ և հեռանում բնագրի ոգուց: Այսպես վարվում է նա ոչ միայն առանձին բառերի նախադասությունների հետ, այլև պոեմի ամբողջական հատվածների վերաբերմամբ: Գլ. 1-ին 273—275 տողերում ասված է.

Հոմերոս՝

''αυριον εις 'αγορην καλεσας ''ηρωας Λαχαιους
μουθον πεφραδε πασιν, οεοι σ'επιμαρτυροι ''εστιν
μνηστῆρας μεν επι σφετερα σχιδναςθαι ''ανωχθι...

Գրքաշարյանը թարգմանում է՝

Առավոտյան քեզ մոտ կանչիր աքայացի հերոսներին
Աստվածներին վկա նշիր և քո կամքը հայտարարիր:
Պատվիրելով ընդհանրապես վերադառնալ տներն իրենց¹²:

Թոմաճանը թարգմանում է՝

Վաղիւ ատեան խմբեան դաւազս Աքայեանց
Սոսեաց վկայքն լինին աստուածք, ձայն տուր ցրուեալ հոմա-
նեաց¹³.

Մի բան, որ առանձնապես ակնհայտ է դառնում այս հատվածի քննարկման ժամանակ, այդ Գրքաշարյանի թարգմանության մեջ որոշ աղավաղումների առկայությունն է. բնագրում չկա «քեզ մոտ կանչիր» դարձվածքը և հետո ավելի ճիշտ կլիներ «''ηρωας բառը թարգմանել «ավագներ, առաջնորդներ», քան հերոսներ, հատվածում բացակայում է նաև μνηστῆρας փեսացուներ բառը, եթե տվյալ հատվածը կտրված դիտենք բնագրից, անհնար է հասկանալ, թե ինչու է ժողով գումարվում և ի՞նչ նպատակով:

«Ոդիսականի» 2-րդ կրգի 15—34 տողերը վերարտադրում են ծերուկ էդիպոսի բնութագրությունն ու նրա ելույթը իթակեցիների ժողո-

⁹ Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Թոմաճանի, 1-ին գլ., 2-րդ տ.:

¹⁰ Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Համբարձումյանի, 1-ին գլ., 2-րդ տ.:

¹¹ Հոմերոս, Ոդիսական, գլ. 3 և 4:

¹² Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Գրքաշարյանի, գլ. 2-րդ, 273—275:

¹³ Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Թոմաճանի, գլ. 2-րդ, 273—275:

վում, ըստ որում նա հիշատակելով Տելեմաքին, ի միջի ալլոց ասում է.

«Գուցե համբավ է նա լսել արքայական մեծ բռնակի դարձի մասին» խոսքն այստեղ վերաբերում է Տրովի դեմ պատերազմող արքայական զորամասերի վերադարձին, զորամասեր, որոնք էդիպոսի և առհասարակ բոլոր արքայացիների համար հայրենի և հարազատ զորքեր էին և բնավ չէին կարող «թշնամական բանակ» համարվել: Մինչդեռ թարգմանիչը տեքստի իմաստը ձևավորել է այսպես.

«Կամ թշնամու բռնակ է նա տեսել արդյոք մեր մեծ կղզում»:

Հոմերոսն առանձին, ցայսուհե ու ինքնատիպ պատկերացումներ է ստեղծել մարդկային խոսքի և նրա փալլուն արտահայտություն մասին. նախ՝ խոսքը ընկալվում է որպես թեմավոր թռչուն, որ թռչում է խոսողի բերանից: «Իլիականի» և «Ոդիսականի» մեջ բազմաթիվ անգամ կրկնվում է «պատասխանեց և խոսքն ասաց թեմավոր»։ Եթե խոսքը լսողի կամ պատասխանողի մեծ հապաղում կամ չի արտասանվում՝ Հոմերոսն ասում է «փետրաթափ եղավ խոսքը նրա մեջ», այսինքն կորավ դրվից բերանից դուրս թռչելու կարողությունից: Վերջապես՝ խոսքի արագ ու շեշտակի արտահայտվելու դեպքում՝ բանաստեղծն ասում է «Խոսքը դուրս թռավ ատամների ցանկապատից»:

Այս համեմատությունները ոչ միայն հայտնի են Հոմերագետներին ու Հոմերոսի ընթերցողներին, այլև հետազոտություն նյութ են դարձել շատերի համար:

Խոսքի այդօրինակ արտահայտությունները հատուկ են ժողովրդական մտածողությանը՝ ֆոլկլորին: Մեր ժողովուրդն ասում է. «խոսքը բերանից չվանով քաշել», խոսքը ծամել բերանը գցել, խոսքը կտուրը գցել և այլն:

Հոմերոսի այս կարգի պատկերացումները Երբաշարյանը հարազատորեն չի թարգմանել: Թարգմանություն մեջ բնագրի ձևավորումը «խոսքն ասաց իր թեմավոր» համարյա ամենուրեք վերացել է, իսկ փոխարենը դրված է միայն «և խոսքն ասաց» դարձվածքը: Համարյա ամենուրեք Երբաշարյանը մոռացություն է տվել հոմերոսյան ձևը. «Այդ ինչ խոսք էր» թռավ ատամներիդ ցանկապատից»¹⁴:

Յուրաքանչյուր թարգմանիչ ոչ միայն պետք է ձգտի ճշմարտության հասնելու, այլև նախ և առաջ չպետք է մոռանա, թե ինչ ժանրի գործ է թարգմանում և ինչպիսի յուրահատկություններ ունի այն. ձգտի հասնելու հեղինակային հարազատության: Կոնկրետ դեպքում Հոմերոսի ստեղծած այս պատկերացումները վեր են ածվել պարզ ու սովորական շարադրանքի (ինչ խոսք էր, որ դուրս թռավ քո ատամների պարսպից: Զևսի լուրը, նրանից ծնված լուրը):

1958 թ. հունարեն բնագրից Համբարձումյանի հեգինակությունը կատարվեց «Ոդիսականի» նոր թարգմանությունը: Ինչպես բոլոր թարգմանությունները, այս թարգմանությունը ևս ունի մի քանի թերություններ. ոճական անճշտություններ, որոշ հասկացողությունների ոչ ազեքվատ թարգմանություններ, ինչպես օրինակ՝ հետևյալները.

Թարգմանիչը շեղվել է էպիկական կրկնություններին հարազատ մնալու սկզբունքից, այսպես՝ բնագրի կրկնվող ἦμος ‘ἡριγενεια φανη ‘ροδοδαχτυλος

¹⁴ Հոմերոս, Ոդիսական, թարգմ. Ս. Գրեշարյանի, գլ. 1, 67 տող, գլ. 5, 21 տող:

իդոն նախադասութիւնը թարգմանւում է միանգամայն տարրեր պատկերներով և հնարանքներով (տե՛ս գլ. 2 և 8 տող 1-ին):

«Ոդիսականի» 1 գլխի 8-րդ տողում ասված է՝ «οὐ κατὰ βουζα Ἰππεριονος Ἡελιοιο ἠθθιον...»

Թարգմանչը գրում է՝

«.....Երբ լափեցին անմտաբար ցուլ եգները Հիպերոնի», թարգմանիչը ազատվել է «Ἰππεριονος Ἡελιοιο» բարդացած ձևից նկատի ունենալով, որ Հիլիոս արևի աստվածը Հիպերոնի որդին էր և նույն անունով էլ կոչվում էր, մանավանդ, որ հունարեն Հիպերոս անձնանունը ստացել է ածական էպիտետի նշանակութուն, այն է՝ բարձունք, որը արևի հատկանիշներից էր։ Նման դեպքերի կարելի է հանդիպել թարգմանութիւն մեջ, որոնք գունատում են թարգմանութիւն վառ տպավորութիւնը:

Ինուծագրիչ էպիտետները Հոմերոսի մոտ կապակցված չեն քերականորեն տվյալ նախադասութիւն մտքի ընդհանուր սիստեմի հետ, նրանք անկախ են և դարդարում են հեղինակի խոսքը, այդ էպիտետներն ունեն պատմա-դիցաբանական հիմք։ (Այսպես՝ Զևսը միշտ երկնասասան է, Հեկտորը՝ ձիազուսպ, Աֆրոդիտեն՝ փրփրածին):

Էպիտետները Հոմերոսի մոտ մշտական են, հաստատուն, կայուն (այսպես՝ Զևսը միշտ երկնասասան է, Հեկտորը՝ ձիազուսպ, Աֆրոդիտեն՝ փրփրածին), և ոչ մշտական կապված առանձին դեպքերի և իրադարձութիւնների հետ, այս հանգամանքը նրբամտորեն ըմբռնված է Հոմերոսի բոլոր հայ թարգմանիչների կողմից։ Մեր թարգմանիչներից համարյա բոլորն էլ, անկախ նրանից գրաբար են թարգմանում թե՛ աշխարհաբար, օգտագործում են գրաբարյան հարուստ բառապաշարը, այսպես՝ κορυμβαιολος կորդակոճոճ, մի էպիտետ, որով բնութագրվում է Հեկտորը, կամ ἄναξ ἀνδρῶν արանց արքա, (Աղամեմնոն) πολυμήχανός բաղմախելք, բաղմահնար (Ոդիսեւս)։ Վերջիններս այնքան են տիպակաճացել և ստացել անհատական երանգ, որ կոնտեքստից անկախ անգամ կարելի է որոշել նրանց պատկանելիութիւնը։ Նրանք երբեք չեն կրկնվում և միշտ պահպանում են իրենց իմաստային առանձնահատկութիւնները, այնտեղ յիշատածի և «ոսկեգահ» Հերան, սեամազ և երկրասասան է Պոսեյդոնը, Ժանաի և փոթորկաժին է Ժովը և այլն և այլն։

Այս առումով Համբարձումյանի տվյալ թարգմանութիւնը ոչնչով չզիջելով իր նախորդներին պահպանում է նաև այն մանր ու նուրբ տարբերակները, նյութանունները, որոնցով բնութագրվում է Հոմերոսի Ոդիսականը։

Հոմերոսի խորը ռեալիստական արվեստը միահյուսվում է այն հեքիաթային տարրի հետ, որ անհրաժեշտաբար պահանջում է տվյալ ժանրի ստեղծագործութիւնը։ Պոետը մեզ տանում է այն հրաշալի աշխարհը, ուր թափառում է իր հերոսը (գլ. 10)։ Այս գլխի առաջին տողերում թարգմանիչը վեր է հանել իր՝ բնագրին տիրապետելու կարողութիւնը.

Հոմերոս՝

πασαν οὐκ ἐπεὶ μὴν περὶ πείλοιο

Χαλκείῳ ἀργηκτον, λίσσῃ δαναεδόμε πετρῇ¹⁵

¹⁵ Ὁ μέρους, Οἰσσεύειος X, 3-5:

Համբարձումյան՝

... Շրջապատված էր այդ կղզին

Պղնձակերտ պարիսպներով, իսկ վերևից կային անքակտելի ժայռեր¹⁶,
Համբարձումյանը աղեքատ վեր հանելով բնագրի իմաստը, միննույն
ժամանակ պահպանել է լեզվի հոմերոսյան ճկունությունը և պարզությունը:

Հետաքրքիր է ազգային սովորությունների ճանաչողական առումով մե-
ռածի պատվին տրվող զոհողության մասին հայտնած Հոմերոսի տեղեկու-
թյունը և այդ հատվածի ճշմարտացի վերարտադրությունը Համբարձումյանի
կողմից.

Համբարձումյան՝

Վերուստ ցանիր դու գարեղեն ճերմակ ալյուր

Ու ծնկաչոք ջերմ աղոթիր դու անմարմին մեղեքների գլուխներին.

Եվ խոստացիր, որ Իթակե հասնելուն պես գանձ ու գույքն քաջապերճ

Քառուկի մեջ պիտի նետես և պիտ զոհես ամենալավ կովը ստերջ,

Որ հատկապես Թերեզիոսին զոհ կբերես մի այնպիսի խոյ թույրա-
թուխ¹⁷...

Հոմերոսյան պոեմները գրված են հեկզամետրով: Հունական բանաստեղ-
ծական չափը խիստ տարբերվում է հայկականից, վերջինս հիմնված է շեշտ-
ված ու անշեշտ վանկերի վրա, մինչդեռ հունականը երկար և կարճ հեկզամետ-
րը՝ վեցաչափ է կազմված 6-ական ոտքերից, այն ունի հետևյալ պատկերը՝
ՍՍ,-ՍՍ,-ՍՍ,-ՍՍ-- ըստ որում վերջին հինգերորդ ոտքը դաքտիլիկ է, իսկ վեցե-
րորդը սպոնդական, ոտանավորը սկսվում է երկար և բարձրահնչյուն վան-
կով, իսկ նրան հաջորդող վանկերը կամ երկու կարճ են կամ մեկ երկար:
Հեկզամետրի համար բնորոշ է նաև ցենզուրան: Ահա այս չափով են ստեղծ-
ված հունական հնագույն ստեղծագործությունները «Իլիականը» և «Ոդիսա-
կանը»:

Հայ թարգմանությունները, սակայն, չեն կատարված հեկզամետրով,
քանի որ վերջինիս լուրահատկությունը հունարենում առկա կարճ և երկար
վանկերի գոյությունը է պայմանավորված:

Հոմերոսի «Ոդիսական» վիպերգությունն հայերեն երեք թարգմանու-
թյուն ունի մինչև օրս, դրանք լրացնում են միմյանց և տալիս են պոեմի
ամբողջական պատկերը:

¹⁶ Հ ո մ եր ո ս, Ոդիսական, X, 3-5, թարգմ. Համբարձումյանի:

¹⁷ Հ ո մ եր ո ս, Ոդիսական, թարգմ. Հ. Համբարձումյանի, գլ. 10-րդ: